

<<Հրդեհների վիճակագրություն>>

2013թ. 8 ամիսների ընթացքում հանրապետությունում արձանագրվել է 895 հրդեհ՝ շուրջ 262 միլիոն դրամի նյութական վնասով: Հրդեհից զոհվել է 6, վնասվածքներ ստացել՝ 25 մարդ: Ոչնչացել է 22 շինություն, 27 միավոր ավտոտրանսպորտ, շուրջ 457 տոննա անասնակեր, գրանցվել է խոշոր հրդեհի 30 դեպք:

Հրդեհների քանակը նվազել է Լոռու, Շիրակի, Արարատի, Տավուշի մարզերում, իսկ աճել էրևան քաղաքում և Արագածոտնի, Վայոց ձորի, Կոտայքի, Սյունիքի, Արմավիրի ու Գեղարքունիքի մարզերում:

Հրդեհների առաջացման հիմնական պատճառներն են կրակի հետ անզգույշ վարվելը՝ 49.5%, էլեկտրական սարքավորումների տեղակայման և շահագործման կանոնների խախտումը՝ 22.9%, վառարանների տեղակայման և շահագործման կանոնների խախտումը՝ 2.6%, կրակի հետ երեխաների խաղալը՝ 10.2%, հրկիզումները՝ 1.4% և այլ պատճառները՝ 13.4%:

Ջոհերով հրդեհներ են գրանցվել հետևյալ տարածաշրջաններում՝ Գեղարքունիք և Շիրակ՝ երկուական, ք. Երևան, և Արմավիր՝ մեկական: Դրանց առաջացման պատճառներն են կրակի հետ անզգույշ վարվելը, անզգուշությունը ծխելուց, վառարանների և էլեկտրական սարքավորումների տեղակայման ու շահագործման կանոնների խախտումը: Ջոհվածներից 4-ը՝ տարեցներ են (70 տարեկանից բարձր): Ջոհերի զգալի մասը՝ 4-ը, գրանցվել է բնակելի հատվածում:

Վնասվածքներով հրդեհներ են գրանցվել հետևյալ տարածաշրջաններում՝ ք.Երևան՝ 10, Շիրակ, Արարատ և Արմավիր՝ չորսական, Կոտայք, Արագածոտն և Սյունիք՝ մեկական: Դրանց առաջացման պատճառներն են կրակի հետ անզգույշ վարվելը, էլեկտրական ու գազով գործող սարքավորումների տեղակայման և շահագործման կանոնների խախտումը, անզգուշությունը ծխելուց, վառելանյութի արտահոսքը և պայթյունը: Վնասվածքներ ստացածներից 2-ը երեխաներ են, իսկ 4-ը՝ տարեցներ: Վնասվածքների կեսից ավելին՝ 13-ը, արձանագրվել է բնակելի հատվածում:

Հրդեհների 55.5%-ն արձանագրվել է քաղաքային, իսկ 44.5%-ը՝ գյուղական բնակավայրերում: Հանրապետությունում տեղի ունեցած հրդեհներից 30-ը խոշոր են, որոնց պատճառած նյութական վնասի գումարը կազմում է ընդհանուր նյութական վնասի շուրջ 63%-ը:

Հրդեհների 36.9%-ը տեղի է ունեցել բաց և խոտածածկ տարածքներում, 31.1%-ը՝ բնակելի հատվածում, 11.2%-ը՝ ավտոմեքենաներում, 3.3%-ը՝ առևտրի, հանրային սննդի ու սպասարկման օբյեկտներում, 1.5%-ը՝ ավտոտնակներում, 1.1%-ը՝ արտադրական շենքերում, իսկ 14.9%-ը՝ այլ նշանակության օբյեկտներում:

ՀՀ ԱԻՆ ՊՀ և ՏՍՏ ՀՀՎՀՔ բաժնի պետ
Ս. Հայրապետյան